ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ գյուղական համայնքի ղեկավարի 2013թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Հաշվետու ժողովը տեղի է ունեցել 2013 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 14.00-ին համայնքի կուլտուրայի տան դահլիճում: Ժողովին մասնակցում էին ավագանու անդամներ,համայնքապետարանի աշխատակազմը,դպրոցի ուսուցիչներ,մանկապարտեզի կոլեկտիվի անդամներ,համայնքի բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Գոռ Հովհաննիսյանը:
Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար՝ Ս.Բաղալյանը, որն իր աշխատանքները կազմակերպում է իրեն սահմանված լիազորությունների շրջանակներում:
2013թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հրավիրվել է ութ ավագանու նիստեր,որոնցում քննարկվել են համայնքին վերաբերվող մի շարք հարցեր և դրանց վերաբերյալ ընդունվել համապատասխան որոշումներ: Ընդունված որոշումների կատարման մասին իրազեկվել է համայնքի ազգաբնակչությանը:
Անցած վեց ամիսների ընթացքում համայնքի ղեկավարին տարբեր հարցերով դիմել են շուրջ 52քաղաքացիներ,որոնց պահանջներին տրվել են համապատասխան լուծումներ: 384 քաղաքացիների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ:

Գյուղատնտեսության բնագավառ

2013թվականի երկրորդ կիսամյակին առանձնակի ուշադրություն է դարձվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, բարձր բերքի ապահովման ուղղությամբ:
Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում համայնքի հողագործներին վաճառված պարարտանյութը և դիզվառելանյութը խթան հանդիսացավ արտադրվող մթերքների ինքնարժեքի իջեցման, ստացվող շահույթի ավելացման համար:
2013թվականի մայիսի 12-ի կարկտահարության հետևանքով համայնքի 14 հողագործներին հասցված վնասի հատուցման համար

կառավարության կողմից որպես հողի հարկ տրամադրվեց 452842 դրամ օգնություն:
Կարկտահարման հետևանքները վերացնելու նպատակով համայնքապետարանի ուժերով կազմակերպվել է մեթոդական օգնություն կորցրած բերքի վերականգման և եկող տարվա համար բարձր բերքի ապահովման ուղղությամբ:

Կենցաղ սպասարկման բնագավառ

Բնակչության կենցաղային հարցերը եղել և մնում են համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում:
Համայնքի տարածքում կատարվում է անվճար աղբահանություն ,որի համար 2013թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ծախսվել է 382,0 հազար դրամ գումար::Աշխատանքներ են տարվում համայնքի նորաստեղծ թաղամասերը գազաֆիկացնելու ուղղությամբ: Համայնքում խմելու ջրի մատակարարումը 24 –ժամյա դարձնելու համար իրականացվում են մի շարք միջոցառումներ:

Մշակույթ և սպորտի բնագավառ

Համայնքապետարանը կուլտուրայի տան և դպրոցի կոլեկտիվի հետ համատեղ կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ տրամադրելով նաև որոշակի դրամական օգնություն::
Համայնքապետարանը իր մշտական աջակցությունն է ցուցաբերում մանկապարտեզում կազմակերվեպելիք միջոցառումներին:
Մոսկվաբնակ համագյուղացի գործարար՝ Հրանտ Սպարտակի Սահակյանի միջոցների հաշվին ,գյուղապետարանի համագործակցության արդյունքում 2013թվականի մայիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում հիմնովին վերանորոգվել է մանկապարտեզի շենքը,որը հնարավորություն տվեց ամբողջ տարվա ընթացքում գյուղի նախադպրոցական տարիքի երեխաներին հաճախելու մանկապարտեզ:

Սոցիալական բնագավառ

Համայնքապետարանը իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է

պահում սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու,նրանց դիմումներին ընթացք տալու գործընթացը: 2013թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում 32 ընտանիքների տրամադրվել է 1600,0 հազար դրամական օգնություն: 12 ընտանիքներ ընդգրկված են նպաստառուների ցուցակում,երկու զինծառայողներ ազատվել են ավտոմեքենայի գույքահարկից:

Համայնքային բյուջեյի իրագործում

Բյուջեյի կատարման գործընթացը մշտապես եղել է համայնքի ղեկավարի առաջնահերթ ուշադրության կենտրոնում:
2013 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հավաքագրվել է հողի հարկ՝ 4265,0 հազար դրամ,գույքահարկ ՝ 4383,4 տեղական տուրքեր՝ 487,6 հազար դրամ :
Համայնքապետարանը աշխատավարձի ,սոցվճարումների և այլ ծառայությունների հետ կապված վճարումները կատարում է ժամանակին: Աշխատակիցները սահմանված կարգով օգտվում են իրենց սահմանված արձակուրդներից:

Համայնքի հիմնախնդիրները

1. Ոռոգման ջրի ինքնահոս մատակարարում
2. Մշակույթի տան շենքի նորոգում
3. Մրգաշատ տանող ճանապարհի նորոգում
4. Գյուղում գիշերային լուսավորության անցկացում:

Նորապատ համայնքի ազգաբնակչությունը համայնքապետ՝ Ս.Բաղալյանի գլխավորությամբ իրենց խորին շնորհակալությունն են հայտնում մարզպետ պարոն՝ Ա.Ղահրամանյանին համայնքի կողմից բարձրացված խնդիրներին լուծում տալու համար և լի են վճռականությամբ համայնքի առջև ծառացած խնդիրները կյանքի կոչելու ոգով:

Նորապատ համայնքի ղեկավար՝ Ս.Բաղալյան